«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԹԵՄԱ- Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի>> վեպի ուսուցման ընթացքում

ԱՌԱՐԿԱ-Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ-Արմինե Մուրադյան

ՄԱՐԶ -Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ- Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոց

Ապարան 2022թ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

ՎԵՊ

Բովանդակություն

Ներածություն 5

Հիմնական մաս 8

Եզրակացություն 17

Գրականության ցանկ 18

Ներածություն

«Կը նահանջին ծնողք, քեռի, փեսայ. Կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր։ Կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն։ Եվ մենք դեռ կը նահանջենք բանիւ ու գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղա՜յ, մեղա՜յ Արարատին»։ /1.էջ 151/

20-րդ դարի 20-ական թվականներին սփյուռքահայ գրականության մեջ շնորհիվ ֆրանսահայ գրողների, որոնց թվում էր նաև Շահան Շահնուրը, ձևավորվեց գրական մի նոր ուղղություն՝ նահաջի գրականությունը։ Նահանջի գրականությունը միտված էր նահանջի դեմ պայքարելու, սթափեցնելու օտար ափերում դեգերող հայորդիներն, նրանց վերադարձնելու հայրենիք։ Իր «Նահանջը առանց երգի» վեպով նա առաջինն ահազանգեց <u>սփյուռքահայերի նահանջի, ձուլման</u> վտանգի մասին։ Վեպն արժանացավ շատ դրական ու հիացական կարծիքների, ինչպես նաև ենթարկվեց քննադատությունների։ Շահնուրին մեղադրում էին ծայրահեղության և հարցերը միտումնավոր սրելու մեջ։ Սակայն Շահնուրի վեպը հայությանը ուղղված զգայական կոչ էր, որը մինչև օրս էլ չի կորցրել իր <u>արդիականությունը</u>, քանի որ մեր հայրենակիցները տարբեր պատճառներով հեռանում են օտար երկրներ և աստիճանաբար <u>նահանջում, ձուլվում</u>, դառնում օտարների մի մասնիկ։ Արտագաղթի և ձուլման վտանգը առկա է նաև այսօր, ուստի թեման արդիական է։

Հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողների մեջ ձևավորել արժեքային համակարգ՝ բարձրացնելու և ամրապնդելու հայրենասիրությունը, ազգային արժանապատվությունը, համախմբելու ազգային գաղափարների շուրջ, զարգացնելու և պահպանելու հայ մարդու տեսակը։

Սահմանել ռազմավարություն ինքնաճանաչման, հայացքների ձևավորման, վերլուծական հմտությունների դրսևորման, ստեղծագործության դաստիարակչական կողմի ընկալման, ճանաչողական ունակությունների զարգացման համար:

Ես՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ջանք ու եռանդ չեմ խնայելու սովորողների գիտակցության մեջ զարգացնելու կարողունակություններ, որ նրանք ձեռք բերեն գիտելիք, կարողանան արժևորել, ունենան դիրքորոշում և հմտություն՝ պահպանելու ազգային ինքնությունը, չգնալ նահանջելու և ձուլվելու փշոտ ճանապարհով:

.Հետազոտական աշխատանքի խնդիրն է ուսումնասիրել և ներկայացնել Շահնուրի բարձրացրած հարցը, ցույց տալ այն շոշափելի և տեսանելի վտանգը, որը ազգիս կտանի ձուլման:

.Բացահայտել սովորողի ազգային ինքնաճանաչողական հետաքրքրությունները:

.Հաստատել սովորողների մեջ ազգային արմատներից չհեռանալու, ազգայինը պահելու գիտակցությունը:

.Ներկայացնել նահանջի պատճառներն ու հետևանքները:

Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը լույս է տեսել 1929 թվականին: Այն Շահնուրը նվիրել է իր լավագույն բարեկամին՝ Հ. Տեր-Հակոբյանին: Վեպը բաղկացած է երեք մասից, որտեղ ներկայացվում են վեց գլխավոր հերոսների՝ Պետրոսի (Պիեր), Սուրենի, Հրաչի, Լոխումի, Լեքսյուրի և Նենեթի (մադամ Ժանն) վարքագիծը, կյանքը, զգացմունքները: Աստիճանաբար բացվում է հերոսների հոգեկան աշխարհը, որն էլ օգնում է խորությամբ ըմբռնելու 20-30-ական թվականների ֆրանսահայ հասարակության կյանքը՝ իր տարաբնույթ աշխարհով, օտարացման տանող ուղիով: Հռերոսները երիտասարդներ են, ովքեր Կ.Պոլսից գաղթում են Ֆրանսիա: Սյուժեն հիմնականում կենտրոնացած է Պիերի և Նենեթի սիրո պատմության վրա: Վեպում բարձրացված են <u>խնդիրներ</u>, որոնք վերաբերում են նոր կյանքի ու բարքերին զոհ դարձած, ուծացման կործանարար ուղին բռնած այս հայերին:

Շահնուրը միտումնավոր է ընտրել տարբեր խառնվածքի ու սկզբունքների տեր այս երիտասարդներին, որովհետև, ըստ նրա, երիտասարդներն ավելի շուտ են վարժվում նոր կյանքին, մոռանում հայրենիքը, լեզուն, կրոնը, սեփական ավանդույթները, և հենց այս բոլոր խնդիրները նա ամբողջացրել է մեկ բառի՝ «նահանջ» կամ մեկ վերնագրի մեջ՝ «Նահանջը առանց երգի»:

Այստեղ որպես միջոց վերցված են սերն ու աշխատանքը, որոնց օգնությամբ հեղինակը ցույց է տվել կամ վեր է հանել այն պատճառները, որոնք մարդուն փակուղու մեջ են դնում և պահում օտարության ճիրաններում:

Պետրոսը՝ վեպի գլխավոր հերոսը, որքան էլ փորձում է ընդդիմանալ ուծացման ռեալ վտանգին, չի կարողանում ազատվել նահանջի հետապնդումներից: Նա իր արարքներով ավելի է մխրճվում օտարության ճահիճը: Պետրոսի անցած ճանապարհը համընդհանուր է. այսպես շարժվում է մի ամբողջ սերունդ: Պետրոսը ցավագին է ընդունում իր ընկերոջ՝ Սուրենի նահանջը՝ չգիտակցելով, որ ինքն էլ մեկն է այդ նահանջողներից: Նենեթի հետ նրա ամուսնությունը, օրագրի մեջ օրավուր ավելացող ֆրանսերեն գրառումները և շատ այլ փաստեր դրա վառ ապացույցն են: Ի վերջո Պետրոսը, որ համառորեն դեմ էր նահանջին, չտեսնելով պայքարի ուղին, գալիս է տխուր մի համոզման, որ նահանջը անխուսափելի է: Վեպում բոլորը նահանջում են՝ բացի Լոխումց, որը քահանայի որդի էր, Պոլսի Պերպերյան վարժարանի նախկին սան: Լոխումը հայտնվում է անելանելի վիճակում: Նա չէր կարող այլևս մնալ Ֆրանսիայում և չէր էլ կարող տեսնելիր հայրենակիցների նահանջը ու ձուլումը օտար ազգին: Այս ամենը նրան հասցնում է խելագարության:

Թեև տարբեր է վեպի հայ հերոսների կյանքի ընթացքը, բայց ընդհանրական է նրանց նահանջի վարքագիծը: Յուրաքանչյուր յուրովի, աստիճանաբար հեռանում է ազգային արմատներից: Ամենացավալին այն է, որ նահանջողները կորցնում են իրենց հետդարձի հնարավորությունը:

Իբրև իրական հայրենասեր՝ Շահնուրը իր առջև խնդիր է դնում՝ իր հայրենակիցներին ազատել պատրանքներից և ցույց տալ իրականությունը. «ես պիտի ուզեի, որ մեր աղաները իմանային այս ըսածները և փոխանակ հաչելու կամ հայհոյելու, վերջապես ըմբռնեին տիրող մթնոլորտի ծանրությունը, ըմռնեին աղետը և դարմանեին, խորհեին, եթե կարելիությունը կա… եթե կարելիությունը կա»: Ահա այս ինքնաքննադատական հայացքը թույլ էր տալիս Շահնուրին ասել, որ իր հայրենակիցները զանգվածաբար նահանջում են:

Ցավալի է, բայց այս նահանջը կա նաև այսօր: Այսօր էլ մենք տեսնում ենք մեր հայրենակիցների ձուլումը: Եվ հենց այս առումով էլ կարելի է ևս մեկ անգամ ասել, որ թեման շատ արդիական է: Ուստի պետք է զգաստանալ, սթափվել, ելք ու ճանապարհ գտնել, ի վերջո պայքարել լուռ ու ազգասպան նահանջի ու ձուլման դեմ:

Հիմնական մաս

Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի ուսուցումը

Ուսուցիչն իր ներածական խոսքը սկսում է Հովհաննես Թումանյանի հետևյալ թևավոր խոսքով. «Կարելի է չսիրել հարազատ եղբորը, եթե նա վատ մարդ է, անկարելի է չսիրել հայրենիքը, ինչ էլ որ նա լինի»: Ընթերցելուց հետո ուսուցիչն հարց է ուղղում դասարանին, թե ինչ՞ են հասկանում հայրենիք ասելով: Սովորողները պետք է հարցին պատասխանեն մեկ բառով: Ուսուցիչը պատասխանները գրում է գրատախտակին՝ առանց ընդհատելու և ուղղելու երեխաներին: Երբ բոլորը հայտնում են իրենց կարծիքը, ուսուցիչը սկսում է ամփոփել այն, ինչ գրել է գրատախտակին: Ամփոփումից հետո ուսուցիչը հայտնում է իր կարծիքը, նշելով, որ շատ հայեր այսօր իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար մեկնում են օտար երկրներ՝ թողնելով իրենց տունը, ընտանիքը, հայրենիքը: Սա շատ ցավալի է, և մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ինչ էլ լինի, մենք պետք է ամուր մնանք մեր հողին կանգնած, պետք է պահենք ու պահպանենք մեր հայրենիքը: Մեզանից յուրաքանչյուրը պետք է պայքարի տիրող իրավիճակի դեմ և հասկանա, որ իր փոքրիկ ներդրումն անգամ այս գործում կարող է մեծ նշանակություն ունենալ մեզ համար, մեր հայրենիքի համար, որը մեր տունն է:

Այս զրույցից հետո միայն ուսուցիչը սովորաղների ուշադրությունը հրավիրում է «Նահանջը առանց երգի» վեպի գործողությունների վրա. «Երեխանե՜ր, եկեք տեսնենք, թե ինչպես են վարվում «Նահանջը առանց երգի» վեպի հերոսները այս պարագայում»:

Վեպն ընթերցելիս սովորողների մոտ առաջանում են այսպիսի հարցեր, որոնց ճիշտ պատասխանները նրանք դժվարանում են տալ՝ առանց ուսուցչի օգնությամբ, այդ պատճառով էլ ուսուցիչը հաճախակի պետք է լսի սովորողներին ու պատասխանի նրանց հուզող հարցերին: Ինչպես ցույց են տալիս դիտումները, Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը սովորողները դժվարությամբ են ընկալում, սակայն ընթերցում են սիրով: Վեպի ուսումնասիրության ընթացքում բացատրվում են նրա ստեղծման շարժառիթները, նյութն ու գաղափարը, մեկնաբանվում է հյուսվածքը, բնութագրվում են գլխավոր հերոսները և այլ կերպարներ: Ուսուցիչը խոսում է նաև վեպի առանձնահատկությունների մասին:

«Նահանջը առանց երգի» վեպի ստեղծման շարժառիթները

Մեկնաբանման ժամանակ ուսուցիչը սովորողների ուշադրությունը հրավիրում է վեպի ստեղծման ժամանակաշրջանի վրա: 1922 թվականին Թուրքիայում նոր հալածանքներ են սկսվում քրիստոնյաների դեմ: Սկիզբ է առնում գաղթի նոր ալիք: 1923 թվականին իր հայրենակիցներից շատերի նման Շահնուրը հեռանում է Պոլսից և հաստատվում է Փարիզում: Այստեղ 1929 թվականին նա տպագրում է իր «Նահանջը առանց երգի»վեպը: Շատ երիտասարդ գրողների հետ Շահնուրը ստեղծում է կարծես «կարոտի գրականություն», որը ուներ նպատակ՝ կործանված հայրենիքի հիշողությունը պահելու և օտար ափերում սփռված հայությանը միավորելու, նրանց մեջ հոգևոր հայրենիք ստեղծելու: Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է գաղթականների դրությունը: Պատմական հայրենիքից բռնի կերպով տեղահանված և օտար ափերում հանգրվանած հայերը փորձում էին պահպանել իրենց ֆիզիկական գոյությունը: Այս ընթացքում նրանք հաճախ հարմարվում էին նոր պայմաններին, աստիճանաբար հեռանում էին ազգային արմատներից, կորցնում լեզուն, մոռանում սովորությունները: Շահնուրը զգում է վտանգի մեծությունը ու տագնապի ահազանգ է հնչեցնում: Ուսուցիչը իր ձեռքի տակ ունի բնագիրը: Նա բացում է գիրքը և սովորողներից մեկին կանչում է գրատախտակի մոտ և գիրքը տալով նրան՝ խնդրում է կարդալ համապատասխան հատվածը. «Կը նահանջեն ծնողք, քեռի, փեսա, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր, կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն: Եվ մենք դեռ կը նահանջենք բանիւ գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղա՜, մեղա՜ Արարատին»: Հատվածի ընթերցումից հետո ուսուցիչը հարց է տալիս դասարանին, թե ի՞նչ հասկացան ընթերցված հատվածից: Սովորողների պատասխանից հետո ուսուցիչը կատարում է ամփոփում: «Հետևաբար, երեխանե՛ր, կարող ենք եզրակացնել, որ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը գրելու շարժառիթը եղել է աշխարհացիր հայությանը սթափեցնելը, նրանց նահանջից ու ձուլումից ետ պահելը, միավորելը մեկ գաղափարի, մեկ կարևոր արժեքի շուրջ, որի անունն է հայրենիք»:

Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի նյութն ու գաղափարը

Ուսուցիչը պետք է նախօրոք հանձնարարած լինի կարդալ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը: Դասարանում սովորողները հակիրճ ներկայացնում են վեպի սյուժեն, որից հետո ուսուցչի օգնությամբ անդրադառնում են վեպի նյութին, բովանդակությանը և գաղափարին: Պետրոսի և Նենեթի սիրո հարաբերություններով, որոնց հիմքում ընկած է երկու ազգերի՝ հայերի և ֆրանսիացիների սիրո հանդեպ ունեցած գաղափարների բախումը, ըմբռնումների տարբերությունը, Շահնուրը վարպետի գրչով տվել է նահանջի պատկերը:

Նոր կյանքը, նոր միջավայրը հայ երիտասարդների հոգում խորը հիասթափություն է առաջացել, հիմք հանդիսացրել հոռետես մտքերի, որոնց մեջ կա և՛ դառը ճշմարտություն, և՛ որոշ չափով հայի կարգավիճակի չափազանցություն: Սուրենը, արհամարհելով հայ մտավորականների կեղծ բարեպաշտությունը, խիստ քննադատության է ենթարկում հայ ժողովրդի անխոհեմ, եսասեր, փառասեր վարքագիծը, որը դարեր ի վեր եղել է հայի կործանման, դժբախտության պատճառը: «Որքան որ մտածումս ետև տանիմ,-ասում է Սուրենը,-հայերը կտեսնեմ միշտ այնպես, ինչպես որ են այսօր: Պզտիկ, գաճաճ, տխեղծ: Յուրաքանչյուրը անդիմադրելի պաշտամունք ունի իր կաշիին, իր մորթին»: /1.էջ 130/

Պետրոսը վիպական գործողությունների սկզբում ուժեղ կամքի տեր անձնավորություն է երևում, քանի որ համառորեն պնդում է, որ իրենք չպիտի ձուլվեն ու նահանջեն: Բայց ահա իրականում, նա այնքան էլ ուժեղ կերպար չի դուրս գալիս, քանի որ նրա ողջ կյանքը մի մեծ նահանջի ուղի է դառնում՝քայլ առ քայլ տանելով նրան այդ ճանապարհով՝ մայրենիի մոռացությունից մինչև հայի կյանքի մաս կազմող Տերունական աղոթքը: Նա, չտեսնելով պայքարի և ոչ մի ուղի, գալիս է Սուրենի համոզմունքին, թե նահանջը անխուսափելի է. «Եվ կկրկներ Սուրենի խոսքերը «պիտի ձուլվինք, բոլորս ալ պիտի ձուլվինք, դարման չկա ասոր…»»/1.էջ 197/:

Վեպում բոլոր հերոսները նահանջում են՝ բացի Զարեհ-Լոխումից, որը, տեսնելով այս ամենը, խելագարվում է, ինչպես Շահնուրն է ասում՝«հայտնվում հիմարանոցում»: Այսինքն՝ Շահնուրի կարծիքով նահանջն անխուսափելի է ամեն դեպքում, իսկ եզակի չնահանջողներին և նահանջի հետ հաշտվել չկարողացողներին սպասվում է խելագարությունը, հոգեկան մահը, ինչպես որ իր չնահանջող հերոսի պարագայում է լինում:

11

Այս դրվագները ներկայացնելուց և մեկնաբանելուց հետո ուսուցիչը կրկին դիմում է սովորողներին՝ հարցնելով, թե ի՞նչ հասկացան նրանք, թե այդպիսով ի՞նչ էր նշանակում նահանջը, այն էլ `առանց երգի: Ուսուցիչը պետք է լսի բոլորին՝ հասկանալու համար, թե արդյոք նրանք ճիշտ են ըմբռնել ներկայացված նյութը: Ուսուցիչը պատասխանելու ընթացքում չի ընդհատում սովորողներին և ուղղումներ չի կատարում: Վերջում կատարում է եզրակացություն: Ուսուցիչը ևս մեկ անգամ նշում է, թե ի՞նչ էր նշանակում նահանջը, ո՞րն էր Շահնուրի նպատակը և վեպի գաղափարը: Նահանջը ձուլումն է, ուծացումը: Իսկ նրա հերոսները նահանջում էին առանց երգի, այսինքն՝ լուռ, առանց պայքարելու: Եվ, ի վերջո, խոսելով նահանջի մասին՝ Շահնուրը վեր հանեց հայրենադարձության թեման՝ որպես հայափրկիչ և հայապահպան ծրագիր:

«Նահանջը առանց երգի» վեպի հյուսվածքը

Խոսելով վեպի հյուսվածքի մասին՝ ուսուցիչը նշում է, որ վեպի հյուսվածքը կուռ է, ամբողջական, նրա առանձին մասերը սերտորեն կապված են իրար հետ՝ շարունակելով և լրացնելով միմյանց: Վեպը բաղկացած է երեք մասից, որոնք աստիճանաբար բացում են հերոսների հոգեկան աշխարհը, օգնում խոսքով ըմբռնելու 20-30-ական թթ ֆրանսահայ հասարակության կյանքը՝ իր տարաբնույթ աշխարհով, օտարացման տանող ուղիով: Սյուժեն կարծես վեց տարբեր ճյուղավորումներ ունի՝ Պոտրոսի, Հրաչի, Սուրենի, Լոխումի, Լեքսյուռի և Նենեթի ընտանեկան, ընկերական միջավայրները՝ իրենց թե՛ ներքին, թե՛արտաքին կողմերով ու նրբերանգներով: Վիպական բուռն գործողությունները ծավալվում են Պետրոսի շուրջ: Շահնուրը սյուժեի զարգացման հիմքում որոշակի միտումով է դրել Պետրոսի և մադամ Ժաննի սիրո պատմությունը: Հենց այս պատմությունն է օգնում բնութագրել ու համոզիչ կերպով ցույց տալ նահանջելու բուն գործընթացը՝ ազգային արմատներից հեռանալու և նոր կյանքին հիմնովին ինտեգրվելու գործընթացը: Գրողը վեպում մեծ ուշադրություն է դարձրել աշխատանքի խնդրին, առանց որի նրանց սիրավեպը նպատակինչէր կարող ծառայել: Վեպում սերն ու աշխատանքը սերտորեն համակցված են. աշխատանքը Շահնուրի համար նահանջը պատկերելու նախահիմքն է հանդիսացել:

11

Վիպական գործողությունները ծավալվում են Ֆրանսիայում, և հեղինակը յուրովի է ներկայացնում հերոսներից յուրաքանչյուրի նահանջը: Օրինակ՝ Հրաչը, որն ի սկզբանե օտարությունը մերժող անձնավորություն էր, բայց որն ամենից շուտ նահանջող և «ֆրանսիացի դարձող» հերոսը եղավ, զգալիորեն փոխվել էր: Մերկ կնոջ պատկերը ձեռքին՝ ցինիկաբար կրկնում էր. «Հա-յաս-տա-նի պատ-կերն է, բան մը տվեք, նա-յե-ցեք: Հա-յաս-տա-նի պատ-կերն է, բան մը տվեք, նա-յե-ցեք…»/1.էջ 133/:

Սուրենը, որ մտավորականի կերպարն էր ներկայացնում ու հաճախ գրականագետները նրա կերպարում տեսնում են հենց իրեն՝ Շահնուրին, հայի առաջին դժբախտությունը կապում էր կրոնի հետ և փորձում դուրս գալ դրա դեմ՝ իր սուրն ուղղելով Նարեկացու «Մատյանին»: «Հայերը գիրքը մը ունին,- ասում էր նա: - Անոնց ամենագեշ, զզվելի, ամենասխալ, վատառողջ և ամենեն ավելի անբարոյական գիրքն է ան – Նարեկը: …Ոչ մեկ սերունդ չխորհեցավ զայն ջնջել, որովհետև անոր լեզվական ու բանաստեղծական ինչ-ինչ հատկություններին խաբվելով ծածկված թույնը չնշմարեց: Ընդհակառակը փոխանցուցին որդե որդի, արյունե արյուն, ու ան եկավ մինչև մեզ: Թունավորվեցանք ազգովին, թունավորվեցանք: Ահա թե ինչու պարտված ենք: Պարտվածներ ենք, որովհետև այն վանական հաշմանդամ հոգիին պես արհամարհեցինք և անգիտացանք գոյությունը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականության - չկռվեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնեական վարդապետության անոր սխալ ու թերի մեկնությունը ընդունելով եղանք անմտորեն կրոնական, համակերպվող, աղերսարկու, անգիտակից» /1.էջ 148/:

Պետրոսը, ով ըստ էության վեպի գլխավոր հերոսն է, ամենասկզբում չի ընդունում իր նահանջը, թեև նա ամուսնանում է ֆրանսուհի Նենեթի հետ, օրագրում օրեցօր շատանում են ֆրանսերեն բառերն ու արտահայտությունները, ֆրանսիական անբարո միջավայրը գնալով սովորական է դառնում նրա համար…: Միայն վերջում՝ Նենեթի մահից հետո, երբ նա ցանկանում է արտասանել «Հայր մերը», նա գիտակցում է, որ այլևս նա նահանջած է իր ազգայինից և ինքն իրենից . «Չեմ հիշեր, կոր, Կոստան, մեղքցի ինձի, ես իմ «Հայր մերս» չեմ հիշեր կոր... Ան պահեն ֆրանսերեն սկսավ արտասանիլիր թավ ձայնով, և հայը խոսքերը կրկնեց շունչ առ շունչ» /1. էջ 212/:

Միայն նահանջի հետ չհամակերպվող Լոխումն է, որ փորձում է մնալ հայ, ավելին՝ յուրայինների մեջ ձգտում է արթնացնել հայի ոգին, որը նրան միշտ ուժ ու եռանդ է տալիս ապրելու և իր ազգային ինքնությունը պահպանելու: Նա հաճախ է հակադրվում իր ընկերներին և բարկանում նրանց վրա. «Նորեն ֆրանսերեն թերթ, նորեն ֆրանսերեն թատրոն, ասոնց հայերենը չկա:

Չպիտի ըլլա, որ դուք ասանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին, չպիտի ըլլա, որ կռվիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ» /1.էջ 156/:

Ահա այս ամենը ներկայացնելուց հետո ուսուցիչը ամփոփում է կատարում հարցերի միջոցով՝ հարցադրումներ անելով, թե քանի՞ մասից է բաղկացած վեպը, ովքե՞ր են գլխավոր հերոսները, և ինչպե՞ս է նրանցից յուրաքանչյուրը նահանջում, ո՞վ է վեպում մնում հավատարիմ իր ազգային ինքնությանն ու չի նահանջում:

Պիերի /Պետրոս/ կերպարը

Ուսուցիչը, մինչև Պետրոսի կերպարը ներկայացնելը, նախ հարց պետք է ուղղի դասարանին, թե ո՞վ էր Պիերը: Սովորողների պատասխանները լսելուց հետո, ուսուցիչը ամբողջացնում է սովորողների պատասխանները: Այնուհետև նա սկսում է համակողմանիորեն ներկայացնել այս կերպարը: Պետրոսը շատ երիտասարդների հետ թողնում է ծննդավայրն ու գալիս է Ֆրանսիա: Նա աշխատանքի է անցնում «Մեծ ծառուղիներ» անվանմամբ լուսանկարչատանը և ճարպկությամբ կարողանում է վարժվել նոր միջավայրին: Նա կարճ ժամանակում ընտելանում է Փարիզի այդ անբարո միջավայրին. «Ամեն օր, և գրեթե ամբողջ օրը , մերկություններու հետ էր իմ գործը...» /1.էջ 71/: Եվ ինչպես հեղինակն է ասում, Փարիզը նրա վրա էլ է մեծ ազդեցություն թողնում: Նախ՝ Պետրոսը դառնում է Պիեր, և հետո, եթե առաջ նրա համար անսովոր էին Փարիզում կատարվող երևույթները, ապա հիմա նա նորմալ է վերաբերում այդ ամենին: Նրա օրագրում օրավուր ավելանում էին ֆրանսերեն գրառումները: Լուսանկարչական արհեստանոցում աշխատելիս նա սիրահարվում է մադամ Ժաննին, և այս հանգամանքը նրան էլ ավելի է մերձեցնում փարիզյան բարքերին: Նրա սերը փոխադարձ էր, բայց այդ սիրո ճանապարհին շատ խոչընդոտներ են հայտնվում, որոնք Պիերը անտեսում է, չնայած որ «հայ մարդուն» չէր սազում Պիերի այդ վարքագիծը: Պիերն այնքան է մխրճվել իր սիրային զգացմունքների մեջ, որ հայի համար սովորական դարձած Տերունական աղոթքն անգամ չի հիշում. աղոթք, որ մայրենիի պես հոգեհարազատ է հային: Այդ աղոթքը մոռանալու փաստը հավասար է մայրենին կորցնելուն: Եվ Նենեթի վրա սգացող Պիերը այդ աղոթքն արտասանում է Նենեթի լեզվով: Սա վկայում է կատարյալ նահանջի մասին:

Լոխումի կերպարը

Քանի որ ուսուցիչը նախօրոք մի փոքր խոսել է Լոխումի կերպարի մասին, սովորողների միջոցով է փորձում ամբողջացնել կերպարի նկարագիրը: Նախ հարց է ուղղում դասարանին, թե ո՞վ վեպում չնահանջեց, չդավաճանեց ու չմոռացավ իր հայրենիքը: Սովորողների պատասխանը լսելուց հետո ուսուցիչը տալիս է իր երկրորդ հարցը, թե ո՞վ է Լոխումը: Այս ամենից հետո միայն ուսուցիչը խնդրում է բնագրից կարդալ հատվածներ, որոնց մեջ մենք պարզ տեսնում ենք, որ Լոխումը դեմ է նահանջին և ամեն կերպ պայքարում է դրա դեմ: Հատվածների ընթերցումից հետո ուսուցիչը ամփոփում է կատարում:

Այսպիսով՝ Լոխումը այն միակ հայն է, ով կործանվում է նույնիսկ ֆիզիկապես, բայց չի նահանջում: Նրա իսկական անունը Զարեհ էր: Նա քահանայի որդի էր և Պոլսի Պերպերյան վարժարանի նախկին սան: Նա փորձում էր հայ մնալ և ձգտում էր իր ընկերների մեջ էլ հայրենասիրություն արթնացնել: Նա անդադար խոսում էր հայրենիքից, հայ թերթերից, հայ թատրոնից, սակայն նրան լսող չկար: Ցանկանում էր իր խոսքը վերածել գործի, բայց ոչ ոք նրան այդ հնարավորությունը չէր տալիս: Դիմում է Խորհրդային հյուպատոսարան, որ Հայաստան մեկնի, բայց թույլ չեն տալիս: Նա մենակ էր, մեն-մենակ այդքան նահանջողների մեջ: Ո՛չ կարող էր շատերի պես նահանջել, ո՛չ կարող էր Հայաստան գնալ, ոչ էլ կարող էր այդքան նահանջողներին ետ պահել:

Լոխումը հայտնվում է անելանելի վիճակում, որից ելք չկար: Այս ամենից միայն մի ելք է տեսնում հերոսը՝ հարբեցողություն, թմրամոլություն, որոնք, ի վերջո, դառնում են նրա կործանման պատճառները: Լոխումը կորցնում է հոգեկան հավասարակշռությունը: Նա մահանում է՝ զառանցանքի մեջ կրկնելով. «Ճահիճները չորցնենք, ջրանցքներ բանանք»: Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ անգամ այս վիճակում նա ցանկանում էր օգտակար լինել հայրենիքին: Նա, ճիշտ է, մենակ էր ընդդեմ բոլորին, բայց սխալ չէր նրա պահանջը, խնդրանքը: Եվս մեկ անգամ կրկնենք, որ նա կործանվեց ֆիզիկապես , բայց չնահանջեց շատերի նման:

Նենեթի կերպարը

Նենթի կերպարը ներկայացնելուց առաջ ուսուցիչը հարցնում է, թե ո՞վ է նրան այդպես անվանել, ո՞վ էր Նենեթը, ի՞նչ վարքագիծ ուներ: Պատասխանները լսելուց հետո ուսուցիչը ներկայացնում է Նենեթի կերպարը: նախ՝ նորից կրկնում է, որ նրան այդպես էր անվանել Պիերը, որ նրա իսկական անունը մադամ ժանն էր:

Նա շատ գեղեցիկ և աշխույժ կին էր, ով իր մեջ ամբողջացնում է ֆրանսուհու կերպարը՝ թեթևաբարո, պչրասեր, սեթևեթող: Նա իր սերը կիսում է Պիերի և Լեսքյուրի միջև: Պիերը շատ էր տառապում նրա այս պահվածքի պատճառով,սակայն Նենեթի այս վարքագիծը ունի իր բացատրությունը: Նրա հայրը մահացել էր, մայրն էլ լքել էր իրեն: Կյանքի դժվարություններին դիմագրավելու համար կապվում է Լեսքյուրի հետ, ով նրան անբարո բիզնեսի մեջ է ներքաշում: Նա օրեցօր ավելի է մխրճվում այդ ճահճի մեջ: նրա անցյալը, իր լուսանկարչատունը պահելու ցանկությունը ստիպում է նրան մնալ Լեսքյուրի կողքին: Նենեթը այնքան էր տարվել այդ թեթևաբարո կյանքով, որ մոռացել էր անգամ իր որդու՝ Բիբիի մասին: Որդուն նա թողել էր օտարի խնամքին:Նա շատ աշխույժ երեխա էր և իսկական պատուհաս էր դարձել մարդկանց գլխին իր չարաճճիությունների պատճառով: Երբ Պետրոսը նրան հարցնում էր մայրիկից, նա ասում է, որ չի սիրում Նենեթին, որովհետև նրանից երբեք մայրական քնքշանք չի տեսել: Սակայն ավտովթարը փոխում է Նենեթի կյանքը: Մահանում է Լեսքյուրը, ինքն էլ կորցնում է իր մի թևը: Ստիպված գալիս է Պիերի մետ: Վերջինս ընդունում է նրան և թվում է, թե նա երջանիկ պիտի լինի, բայց ամեն բան փոխվում է, նրա հոգում շրջադարձ է կատարվում: Նա սիրում էր Պիերին, և այդ սերը գեղեցկանում է վերջում՝ իր իսկ կատարած զոհաբերությամբ: Նենեթը հասկանում է, որ իրենք միասին չեն կարող երջանիկ: Նա հրաժարվում է ամեն ինչից՝ հանուն Պիերի: Նա մի պահ հասկանում է, որ Պիերի մոտ վերադարձել է ոչ թե նրան սիրելու պատճառով, այլ՝ իր սեփական փրկության համար: Պիերը գնացել էր Հրաչի հարսանիքին: Նենեթը շատ ժամանակ է ունենում մտածելու համար և հասկանում է, որ Պիերն իրեն առաջվա պես չի սիրում, գիտակցում է նաև իր մեղքերի ծանրությունը: Նա գրում է մի նամակ և բացատրում ամեն ինչ: Եվ երբ Պետրոսը գալիս է տուն, նրան արդեն մահամերձ է գտնում:

Այս ամենը ներկայացնելուց հետո ուսուցիչը հանձնարարում է սովորողներին գրավոր շարադրել, թե նրանք ինչպես են գնահատում Նենեթի այս քայլը: Գրավոր շարադրանքներն ընթերցելուց հետո ուսուցիչը հայտնում է նաև իր կարծիքը և ամփոփում <<Նահանջը առանց երգի>> վեպը՝ նշելով առանձնահատկությունները: Վեպը կատարյալ է, քանի որ երիտասարդ հեղինակը այստեղ անկեղծորեն արտացոլել է իր տեսածն ու ապրածը: Այն տարիներ շարունակ շատ է սիրվել ընթերցողների կողմից:

Կերպարների նահանջի առանձնահատկությունները



1. ՈՒսումնասիրվեց կերպարների նահանջի գործընթացներն ու վիճակները :

2. Լոխում-բացահայտվեցանձնավորությանանհատական առանձնահատկությունները:

3. ՈՒսումնասիրվեց նահանջող մարդու գործունեությունը:

4. Սուրեն-կանխատեսվեց նահանջի հոգեբանական երևույթների ընթացքը:

5. Պետրոս-բացահայտվեց նահանջողի հոգեկան ապրումներն ու դրսևորումները:

Ուսուցիչը սովորողների ուշադրությունը հրավիրում է վեպի վերջին հատվածի վրա և խնդրում սովորողներից մեկին ընթերցել: «Ներքին խժալուր աղմուկներուն մեջ, ականջներուն անվերջանալի վզզոցեն տարված՝ մեկեն կարծեց, մոտավոր բակե մը ջութակ մը բարձրացավ.հին շատ հին մեղեդի մը բոլորին ծանոթ, որ մինչև հոս կելլեր անհավասար ալիքներով, տատանելով ամենալավ հասկերուն մեջտեղ, որ կուզեր ավելի երկրորդինը հուզել, քան չորրորդ հարկինը, որ ա՛լ պարտասած՝ երբեմն կկառչեր ջուրի խողովակներուն, բայց որ կելլեր, բայց որ կելլեր մինչև հոս, այդ հի՛ն, շա՜տ հին մեղեդին, բոլորին ծանոթ» /1.էջ 192/:

Հատվածն ընթերցելուց հետո ուսուցիչը հանձնարարում է տանը մտածել, թե ի՞նչ մեղեդի կարող էր հնչել վերջում: Վերջում ուսուցիչը կարճ հարցերի միջոցով ամփոփում է «Նահանջը առանց երգի» վեպը: Ամփոփմանը պետք է մասնակցեն բոլորը:

Ավարտելով ամփոփումը՝ ուսուցիչը սովորողներին հանձնարարում է տանը գրել շարադրություն «Պայքա՞ր, թե նահանջ» վերնագրով:

Եզրակացություն

Հետազոտելով Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի>> վեպը՝ եկա այն եզրահանգման, որ թեև ստեղծագործության նյութն ու գաղափարը ներկայացնում են պատմական այլ ժամանակաշրջան,սակայն մեր օրերում ևս այս խնդիրը արդիական է:

Վեպի ուսուցման վերջնարդյունքում սովորողները ճանաչեցին, բնութագրեցին, վերլուծեցին վեպի կերպարները, հաղորդակից ու կարեկից եղան վերջիններիս հոգեկան ապրումներին: Գիտակցելով նահանջի պատճառներն ու հետևանքները, հետևելով կերպարների նահանջի զարգացմանն ու հանգուցալուծմանը՝ տեսան, որ նահանջի և ուծացման ճանապարհը հեշտ ու գայթակղիչ է և կարելի է սայթաքել:ՈՒստի վեպի ուսուցման նորովի մատուցումը, նոր մեթոդաբանությունն ու վերլուծությունը սովորողների մոտ բացահայտել ու ձևավորել է արժեքային համակարգ , կայուն բնավորություն,նոր մտահորիզոն,կարողունակություններ, որով կկարողանան պայքարել նահանջի դեմ:

Սովորողները ավելի լավ ճանաչեցին հայ մարդուն,գնահատեցին հայի բարոյական արժեքները, ազգային դիմագիծը,սովորույթները և այն ամենը, որ կարող է հային հայ պահել աշխարհի ցանկացած ծայրում:

Սովորողները համոզվեցին, որ ազգային արմատներից հեռացած ճակատագրերը դատապարտված են ուծացման , և մեզանից յուրաքանչյուրը պետք է պարտավորված լինի պահելու ազգային ինքնությունը, դիմագիծը՝ կարևորելով հայրենիքը, հայրենասիրությունը , հայրենի հողը:

Հային ապրեցնողը հայոց հողն է, հայոց հողն ապրեցնողը՝ հայը:

Ամեն ժողովուրդ կարող է հարատևել միայն իր հողի վրա ,իր հայրենիքում:

Գրականության ցանկ

1. Շ.Շահնուր «Նահանջը առանց երգի»,Երևան,1991

2. Թ.Գ.Ջուհարյան «Հայ գրականության մեթոդիկա», Երևան 1972